ՇԴ/0761/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 հունվարի 2026 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 12-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի դեկտեմբերի 15-ին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Էքրամադին Ղորբանիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով

(2 դրվագ), Մահգոլ Իսայիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), Մասուդ Նազարիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), Նաջիբա Քարիմիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), Սաիդռահման Նազարիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) և Սեհրաջադին Նազարիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) թիվ 45121425 (ՇԴ/0761/01/25) քրեական վարույթը:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Ա.Շտոյան) 2025 թվականի դեկտեմբերի 17-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 25-ին նախնական դատալսումների ընթացքում որոշում է կայացրել թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր՝ Գ.Պողոսյան) 2026 թվականի հունվարի 12-ին որոշում է կայացրել թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունվարի 19-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2025 թվականի նոյեմբերի 5-ի որոշմամբ Էքրամադին Ղորբանիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ) հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, նախնական համաձայնության գալով Աֆղանստանի Իսլամական Էմիրության քաղաքացիներ Սաիդռահման Նազարիի, Մասուդ Նազարիի, Սեհրաջադին Նազարիի, Մահգոլ Իսայիի և Նաջիբա Քարիմիի հետ, խմբի կազմում, ինչպես նաև*

քրեական պատասխանատվության տարիքի չհասած՝ Ֆ.Ն.-ի /ծնվ. 03.04.2013թ./, Ա.Ն.-ի /ծնվ. 03.03.2016թ./, Ս.Ն-ի /ծնվ. 19.12.2019թ./, Ա.Ն.-ի /ծնվ.18.12.2022թ./ և Ս.Ն.-ի /ծնվ.27.05.2014/՝ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելը կազմակերպելու դիտավորությամբ, 2025 թվականի նոյեմբերի 3-ին՝ ժամը 23:04-ի սահմաններում Շիրակի մարզի Գետաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող ՌԴ ԱԴԾ ՍՎ թիվ 39 ՍՋ «Գետաշեն» սահմանապահ ուղեկալի պահպանվող թիվ 105 սահմանային նիշի մոտակա տարածքով խախտելով «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «ՀՀ պետական սահմանի ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի թիվ 702-Ն որոշման պահանջները ապօրինի՝ առանց սահմանված փաստաթղթերի և պատշաճ թույլտվության Հայաստանի Հանրապետության տարածքից փորձել են հատել ՀՀ պետական սահմանը և մուտք գործել Թուրքիայի Հանրապետություն, սակայն իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունները նրանց կամքից անկախ հանգամանքներով չեն իրագործվել, քանի որ հայտնաբերվել են ՀՀ-ում ՌԴ ԱԴԾ ՍՎ թիվ 39 ՍՋ «Գետաշեն» ուղեկալի ծառայողների կողմից (…)»[1]:

5.1. 2025 թվականի նոյեմբերի 5-ի որոշումներով նույնաբովանդակ ենթադրյալ արարքների համար քրեական հետապնդում է հարուցվել նաև մեղադրյալներ Մահգոլ Իսայիի, Մասուդ Նազարիի, Նաջիբա Քարիմիի, Սաիդռահման Նազարիի և Սեհրաջադին Նազարիի նկատմամբ[2]:

6. Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի դեկտեմբերի 25-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Մեղադրյալների պաշտպանները՝ Ա.Հունանյանը և Է.Մուրադյանը միջնորդեցին քրեական վարույթն ըստ տարածքային ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին այն պատճառաբանությամբ, որ վարույթի մասնավոր մասնակիցները՝ մեղադրյալներ՝ Էբրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սաիդռահման Նազարին և Սեհրաջադին Նազարին որպես կալանավորված անձ գտնվում են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, իսկ մյուս մեղադրյալներ՝ Մահգոլ Իսային և Նաջիբա Քարիմին իրենց անչափահաս երեխաների հետ միասին*

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 168-170:
[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթեր 138-140, 144-146, 150-152, 156-158, 162-164:

բնակվում են ***** ******* գտնվող կացարանում, այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում (...):

Մեղադրյալները հայտնեցին, որ համաձայն են, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին: Մեղադրյալ Նաջիբա Քարիմին հայտնեց, որ ունի փոքր երեխաներ և ամեն անգամ իր Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայանալը դժվարություններ կառաջացնի, իսկ մեղադրյալ Մահգոլ Իսային հայտնեց, որ ունի առողջական խնդիրներ, տարեց կին է և իր համար դժվար կլինի ամեն անգամ Երևանից գալ Գյումրի քաղաք դատական նիստին մասնակցելու համար և խնդրում է, որ գործն ըստ ընդդատության փոխանցվի Երևան քաղաքի դատարանին (...):

Դատարանն արձանագրում է, որ մեղադրական եզրակացությանը կից ներկայացված վարույթին ներգրավված բոլոր անձանց կարգավիճակի և վերաբերելի անձնական տվյալների մասին տեղեկանքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալներ՝ Էքրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սահդոահման Նազարին և Սեհրաջադին Նազարին գտնվում են Երևան քաղաքի ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, իսկ մեղադրյալներ՝ Մահգոլ Իսային և Նաջիբա Քարիմին բնակվում են *.*****, ********* ** հասցեում, այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը՝ վեց մեղադրյալները, փաստացի բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, մեղադրյալներն էլ բոլորը իրենց համաձայնությունն են տվել գործի տարածքային ընդդատությունը փոխելու առնչությամբ և հաշվի առնելով նաև քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու հայեցողական լիազորությունը, արդարադատության շահը, այդ թվում՝ գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը, Դատարանը գտնում է, որ պաշտպանների միջնորդությունը պետք է բավարարել, և քրեական վարույթն ըստ

տարածքային ընդդատության փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին (…)»[3]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2026 թվականի հունվարի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ թիվ ՇԴ/0761/01/25 քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցվել չէր կարող, քանի որ նախ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել ոչ թե այն դեպքում, ինչպես որ իր որոշմամբ նշել է Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, երբ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը* ***գտնվում է*** *առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, այլ այն դեպքում, երբ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը* ***բնակվում է*** *առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում:*

Տվյալ դեպքում հարկ է արձանագրել, որ գտնվելը, բնակվելը և պահվելը տարբեր եզրույթներ են և ունեն միմյանցից ակնհայտորեն տարբեր իմաստներ:

Այսուհանդերձ Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մեղադրյալներ Էքրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սահդոահման Նազարին և Սեհրաջադին Նազարին ոչ թե բնակվում են Երևան քաղաքում, այլ իրենց կամքից անկախ՝ հաշվի առնելով, որ վերջիններիս նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառված կալանքը, պահվում են Երևան քաղաքում գտնվող ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, որպիսի պարագայում, ինչպես վերը նշված քրեակատարողական հիմնարկն, այնպես էլ կիրառված խափանման միջոցը, քրեական գործի քննության ընթացքում կարող են փոփոխվել, հետևաբար վերոգրյալն արդեն իսկ բավարար է հանգելու հետևության, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու մասին Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշումը չի բխում արդարադատության շահից: (…)

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 88-93:

Ավելին՝ եթե Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն այդչափ մտահոգված էր արդարադատության շահով, ապա զրկված չէր և կարող էր ձեռնարկել համապատասխան միջոցներ մեղադրյալներ Էքրամադին Ղորբանիի, Մասուդ Նազարիի, Սահրոահման Նազարիի և Սեհրաջադին Նազարիի պահման վայրը՝ ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը, ՀՀ ԱՆ «Արթիկ» քրեակատարողական հիմնարկով փոխելու ուղղությամբ, քանի որ ինչպես բխում է դատական պրակտիկայից, դատարանների համապատասխան գրությունների հիման վրա, ՀՀ քրեակատարողական ծառայությունը ձեռնարկում է համապատասխան միջոցներ և տեղափոխում է, այդ թվում արդարադատության շահով և պետական միջոցների հաշվին անձանց ուղեկցումն ապահովելու ծախսերի կրճատման նպատակով, կալանավորված անձանց քրեական գործը քննող համապատասխան դատարանի դատական տարածքին ավելի մոտ գտնվող քրեակատարողական հիմնարկ:

Բացի վերը նշվածներից Դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ մեղադրյալների շահերի պաշտպանները՝ փաստաբաններ Ա.Հունանյանը և Էդ.Մուրադյանը հանդիսանում են ՀՀ փաստաբանների պալատի Շիրակի մարզի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններ, այսինքն՝ թեև սույն քրեական գործում առկա չէ վերջիններիս բնակության վայրի վերաբերյալ տվյալներ, սակայն հաշվի առնելով, որ փաստաբաններ Ա.Հունանյանը և Էդ.Մուրադյանը հանդիսանում են ՀՀ փաստաբանների պալատի Շիրակի մարզի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններ, ուստի ենթադրելի է, որ վերջիններիս բնակության վայրերը չեն գտնվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Ինչ վերաբերում է մեղադրյալներ Մահգոլ Իսայիի և Նաջիբ Քարիմիի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում բնակվելուն, ապա այդ մասով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ վերջիններս ՀՀ-ում չունեն մշտական բնակության վայր, ավելին՝ ինչպես բխում է սույն քրեական գործի նյութերից վերջիններս սույն քրեական գործի քննության ընթացքում առնվազն մեկ անգամ արդեն իսկ փոխել են իրենց բնակության վայրը և չի բացառվում, որ ապագայում ևս հաշվի առնելով այն, որ ՀՀ քաղաքացի չեն հանդիսանում, ՀՀ-ում մշտական բնակության վայր և

սոցիալական կապեր չունեն, կարող են կրկին փոխել իրենց բնակության վայրը, այդ թվում բնակություն հաստատելով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Այսպիսով ամբողջացնելով վերոգրյալները՝ հարկ է արձանագրել նաև, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում, կարող է ստեղծվել մի իրավիճակ, որ այն դատարանները, որոնց դատական տարածքում առկա չէ քրեակատարողական հիմնարկ և քրեական գործով բացի կալանավորված մեղադրյալից և/կամ մեղադրյալներից այլ մասնավոր մասնակիցներ առկա չեն, ապա այդ դատարանները չպետք է քննեն այդպիսի քրեական գործեր:

Ավելին՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման տրամաբանությամբ առաջնորդվելու պարագայում, եթե հետագայում կալանքի տակ գտնվող և ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարառողական հիմնարկում պահվող սույն քրեական գործով մեղադրյալներ Էքրամադին Ղորբանիի, Մասուդ Նազարիի, Սահդոահման Նազարիի և Սեհրաջադին Նազարիի պահման վայրը փոխարինվի օրինակ՝ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկով, ապա Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանն էլ իր հերթին կարող է սույն քրեական գործն ըստ տարածքային ընդդատության փոխանցել Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, ինչը Դատարանի գնահատմամբ չի կարող համարվել իրավաչափ և չի կարող բխել արդարադատության շահից ու կարող է ստեղծել քրեական գործի շրջապտույտ, քանի որ քրեական գործի տարածքային ընդդատությունը կարող է փոխվել միայն բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու համար առաջադրվող պայմանների առկայությունը, այլ ոչ այն կպայմանավորվի տեխնիկական տեսանկյունից մեղադրյալի և/կամ մեղադրյալների իրենց կամքից անկախ համապատասխան քրեակատարողական հիմնարկում պահվելով (…)»[4]*:*

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթեր 136-138:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[5]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

11. Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ[7]:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «*(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի ընդդատությունը փոխելու՝ օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, այս նորմը պետք է մեկնաբանվի ընդդատության հիմնարար արժեքի իրավական նշանակությանը համապատասխան, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության և հիմք հանդիսանա առերևույթ կամայականության համար:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

- Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցներից՝ մեղադրյալներ՝ Էքրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սաիդռահման Նազարին և Սեհրաջադին Նազարին գտնվում են ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակտարողական հիմնարկում, իսկ մեղադրյալներ՝ Մահգոլ Իսային և Նաջիբա Քարիմին իրենց անչափահաս երեխաների հետ բնակվում են ***** *******, այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, ինչպես նաև այն, որ մեղադրյալներն իրենց համաձայնությունն են հայտնել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելուն, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին[8]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալներ Էքրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սաիդռահման Նազարին և Սեհրաջադին Նազարին ոչ թե բնակվում են Երևան քաղաքում, այլ իրենց կամքից անկախ՝ կալանավորված լինելու հանգամանքից ելնելով, պահվում են Երևան քաղաքում գտնվող ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, իսկ մեղադրյալներ Մահգոլ Իսային և Նաջիբ Քարիմին, արդեն մեկ անգամ իրենց բնակության վայրը փոխած լինելով, ՀՀ-ում մշտական բնակության վայր և սոցիալական կապեր չունենալով, կարող են ապագայում կրկին փոխել իրենց բնակության վայրը՝ այդ թվում բնակություն հաստատելով Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, իսկ մեղադրյալների պաշտպանությունն իրականացնող փաստաբաններ Ա.Հունանյանը և Էդ.Մուրադյանը հանդիսանում են ՀՀ փաստաբանների պալատի Շիրակի մարզի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբաններ, ուստի ենթադրելի է, որ վերջիններիս բնակության վայրերը չեն գտնվում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, եկել է

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հետևության առ այն, որ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը չի բխում արդարադատության շահից[9]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու լիազորությամբ, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալների համաձայնությամբ փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն վարույթին ներգրավված են ութ մասնավոր մասնակիցներ, որոնց մեծամասնությունը՝ վեց անձ, ներկայում փաստացի բնակվում (գտնվում) է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Այսպես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալները Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեն, նրանցից Էքրամադին Ղորբանին, Մասուդ Նազարին, Սաիդռահման Նազարին և Սեհրաջադին Նազարին ներկայում հանդիսանում են ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորներ[10], իսկ Մահգոլ Իսային և Նաջիբ Քարիմին հինգ անչափահաս երեխաների հետ բնակվում են Երևան քաղաքում՝ ********* ******* ****** ****** * ***** ******* ******** ******* ***** ******** ***** *********[11]: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելը տվյալ դեպքում բխում է արդարադատության շահի պաշտպանության և

[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 31, 42, 63 և 74:
[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, դատական նիստի արձանագրություն, թերթ 39:

վարույթի արդարացիության ապահովման՝ ողջամիտ ժամկետում քննության անհրաժեշտությունից:

15. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

16. Ամփոփելով, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ՇԴ/0761/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ